

մինչև իսկ ընկերվարական լիտըր, յետոյ՝ հայ եկեղեցւոյ վարդապետ, կէս ճամբան կոտորելով իր ուխտը, դառնալու համար մեծամասնական գործիչ: Անոնց կարմրակառոյց դէմքէն, այլապէս տպաւորիչ այն միւս արտայայտութիւնը, երբ քով քովի, բերան կը բանային ու իբր ջաղացքի խողովակ մը, մեր վրայ կը ժայթքէր իրենց ասաւոր «Լօ-լոն», սեգ Սիփանայ սարերն ի վեր, ա՛յնքան ռազմական, հզօր, որ ամէնքս կը շարժէինք մեր ոտքերէն, հետեւելու համար երգին դրոյթին: Ու յեղափոխական քայլերդին (այսպէս որակեցին անոնք ատիկա) բառերը, սուրացող ձիււորներու արշաւը թելադրելէ զատ, մեր ջիղերուն կը տեղային՝ ինչպէս կարկուտի իրական տարափ մը, վերջացող վանկի, երը երկարող սուրի նման մխելով մեր ականջներուն: Կռի՛ւ: Այսպէս ըլլալու էր ելքը դէպի լեռ, հեւքոտ, բուռն, ցուլի կուրծքէ մը փչուած: Ու տակաւին ԾԹի կռիւներուն ականատես սարսափները: Ու տակաւին իրենց պարերգը, օրերգները, Փափուրի ցանը, անվախճան ու անսկիզբ, ինչպէս ծովն էր Վանայ...

Մաթիկ Մելիքխանեանց զեղուն չեղաւ կազմակերպական մանրամասնութիւններէ: Հասկնալի՝ ներկայ իր առաքելութեան մէջ, զոր տուած էր ինքը իրեն: Ուր անիկա ոչինչ գիտէր, ունէր՝ հաղորդելիք: Տեղն է յայտ ընելու, մասով, հանելուկը իր հոս, մեր կողմերը երեւումին: Անիկա ինքզինքը չէր ենթարկեր ոչ մէկ կուսակցութեան, լսելով իր կախակայումը քաջաբար: Անշուշտ այս անկախութիւնը չէր սնաներ նկարագրի ու կամքի հզօր տուրքերով, որոնք մեր մինակութիւնը կը փոխարինեն ու մեզ բաւող կ'ընեն մեզի: Ոչ ալ սնամէջ մեծամտութիւն մը զինքը կ'ընէր անհաշտ, անհաղորդ, անհաւան՝ իր շրջապատին: Ընկեր Մելիքխանեանց հիւանդութիւնն ունէր խօսելով յոգնելու, որ մեր լեզուով հոմանիչ կը դառնայ եսասիրութեան: Այս մարդերը, որքան ատեն որ իմացական արժէքներով պաշտպանեն իրենց այս թերութիւնը, կ'ըլլան տանելի: Բայց զանգուածը ասաւոր արագութեամբ մը